

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶ

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատված է Շահումյան համայնքի ավագանու

21.12.2016թ-ի թիվ 41 -Ն որոշմամբ

Գ. Շահումյան

2016թ

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	7
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	9
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ	10
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	12
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն	13
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	15
3.1. Համայնքի զարգացման տեսլական.....	15
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	16
4. ՀՀԶԾ ֆինանսավորում	17
5. ՀՀԶԾ մոնիթորինգ	18

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Սիրով ողջունում եմ Շահումյան համայնքի ազգաբնակչությանը և բոլոր նրանց ովքեր հետաքրքրված են Շահումյան համայնքի անցուդարձով, կատարվող ծրագրերով:

Տեղական ինքնակառավարման մարմիններում արդյունավետ կառավարում իրականացնելու գլխավոր պայմաններից մեկը՝ գործունեության համաչափ ծրագրավորումն է գալիք ժամանակաշրջանի տարբեր հատվածներով: Սահմանափակ ֆինանսների արդյունավետ ծախսումը, նոր միջոցների ներգրավումը հարկերի հավաքագրմամբ, կնպաստեն համայնքի առաջնահերթ խնդիրների լուծմանը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Հուսով եմ, որ սատար կկանգնեք, որպեսզի կարողանանք իրականացնել մեր առջև դրված խնդիրները, համայնքը դարձնել բարեկարգ և զարգացած համայնք:

Համայնքի զարգացման տեսլականն առաջիկա 5 տարիների համար.

Ռազմավարական քաղաքականության տեսանկյունից Շահումյան համայնքի հնգամյա ծրագրի հեռանկարային ուղղությունները հետևյալն են.

- Բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը
- Համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը
- Հատուկ ուշադրություն դարձնել կրթությանը, մշակույթի զարգացմանը
- Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
- Բարելավել համայնքի ֆինանսական կարողությունը
- Նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը
- Նոր աշխատատեղերի ստեղծում

Համայնքի հիմնական պրոբլեմները

• Գյուղատնտեսությունը զարգացած չէ: Խոտհարքների և արոտավայրերի հեռագնա լինելու, դաշտամիջյան ճանապարհների ոչ բարվոք վիճակի, գյուղ. տեխնիկայի բացակայության, վարելահողերի մշակման անեկամտաբերության պատճառներով բնակիչները քիչ մասն է զբաղվում անասնապահությամբ և հողագործությամբ:

• Աշխատատեղերի բացակայության պատճառով բարձր է գործազրկության մակարդակը:

- Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհները և փողոցներ գտնվում են անմխիթար վիճակում:
- Բնակչության 43 %-ը սոցիալապես անապահով են, 10 %-ը՝ ծայրահեղ աղքատներ:
- Համայնքում բարձր է արտերկիր արտագաղթը:
- Համայնքում առկա են անօթևան փախստականները:

Լուծման ուղիները

- Օրենքների փոփոխություններ
- Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներկրում
- Կոոպերատիվների ստեղծում և ընդլայնում
- Աշխատատեղերի ստեղծում
- Իրավագիտական ծառայությունների մատուցում
- Գովազդ
- Հանրային մասնակցություն
- Համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպություններ հետ

Ծրագրի մշակման, քննարկման և հաստատման գործընթացը

Համայնքի հնգամյա ծրագրի կազմման աշխատանքներին մասնակցել են ՏԻՄ մարմինները, համայնքապետարանի աշխատակազմը: Համայնքի ղեկավարի կողմից ներկայացված՝ հնգամյա ծրագրում ընդգրկվելիք հարցերը քննարկվել են հանրային լսումներում, որին մասնակցել են մոտ 100 բնակիչ, ավագանու անդամները և աշխատակազմը: Հանրային լսումների ընթացքում լսվել է յուրաքանչյուր առաջարկ և հնարավորության սահմաններում ընդգրկվել է հնգամյա ծրագրի մեջ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Շահումյան գյուղը փռված է Վանաձոր քաղաքից հարավ-արևելք, Վանաձոր-Դիլիջան մայրուղու աջ և ձախ մասերում: Սահմանակից է Վանաձոր քաղաքին, Գուգարք, Լերմոնտովո համայնքներին: Համայնքի տարածքով հոսում են Ղարփի և Տանձուտ գետերը: Կլիման բարեխառն է, ամռանը՝ մեղմ և զով, ձմեռը՝ ցուրտ: Առանձին տարիներին նկատվում են կիզիչ շոգեր, երբեմն երաշտ՝ իր վնասակար ազդեցություններով: Ձմռանը ճանապարհները չեն փակվում, քանի որ գյուղը սահմանակից է մարզկենտրոն Վանաձոր քաղաքին, կապը չի ընդհատվում: Հաճախակի են երաշտ՝ չորային ամառները, գարնանային վարար անձրևները, որոնց հետևանքով մեծանում են սողանքները, կարկտահարությունները, ձմռան ցուրտը և այլն: Գյուղը շրջապատված է լեռներով և անտառներով, չնայած՝ սկսած 90-ականներից անտառները նահանջել են: Գյուղի վարչական տարածքը կազմում է 8468.9 հա, որից վարելահողեր՝ 161.5 հա, խոտհարք՝ 1555.8 հա, արոտ՝ 2977.2 հա և այլն: Շահումյան համայնքը հիմնադրվել է 1930-ական թվականներին: Սկզբնական շրջանում գյուղը եղել է ադրբեջանաբնակ, հայերը բնակվել են “Ղամբարանց Թալա” կոչվող վայրում՝ քրթեջներում, որտեղից 30-ական թվականներին եկել են գյուղ: Գյուղի այգիների մի մասը տնկվել են 30-ական, մյուս մասը՝ 60-ական թվականներին: Խորհրդային տարիներին կազմավորվել է կոլտնտեսություն, այնուհետև՝ սովխոզ: Ժամանակին գյուղում գործել է սովխոզ գործարան, կառուցվել են մշակույթի տուն, դպրոց: Կառուցվել են նաև բազմաբնակարան 2 շենքեր: 1988թ. ադրբեջանական պատերազմների ժամանակ գյուղը վերջնականապես բնակեցվեց հայերով, մեծ թիվ են կազմում փախստականները՝ 424:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի մշտական բնակչության ընդհանուր թիվը	2935
. տղամարդ	1491
. կին	1444
. նախադպրոցական տարիքի (0-5 տարեկան)	135
. դպրոցական տարիքի (6-17 տարեկան)	467
. միջին տարիքի (18-60 տարեկան)	1920
. 60 տարեկանից բարձր	413
. ընտանիքների թիվը	870
. գրանցված ընտրողների թիվը	1880

Բնակչության սոցիալական կազմը

1. Կենսաթոշակառուներ, որոնցից՝		347
	հաշմանդամներ (1-ին, 2-րդ, 3-րդ խմբի)	
	միակողմանի ծնողազուրկ երեխաներ	12
	երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-
	մանկուց հաշմանդամ երեխաներ	5
	միայնակ կենսաթոշակառուներ	29
	զոհված ազատամարտիկների ընտանիքներ	5
2.	Պատերազմի մասնակիցներ, վետերաններ, որոնցից՝	44
	ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ վիրավորված ազատամարտիկներ (1-ին, 2-րդ, 3-րդ խմբի)	4
3.	Փախստականներ (մարդ)	424
4.	Բռնադատվածներ	2
5.	Բազմազավակ ընտանիքներ (3 և ավելի անչափահաս երեխաներով)	108
6.	Սոցիալական ծառայությունների Վանաձորի տարածքային գործակալության աղքատության ընտանեկան համակարգում հաշվառված ընտանիքների թիվը (միջինը), այդ թվում՝	153
	ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	90
	հրատապ օգնություն և սոցիալական նպաստ ստացողների թիվը (միջինը)	35

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Աննկարագրելի ցածր է բնակչության սոցիալական վիճակը: Միակ զբաղմունք գյուղատնտեսությունը, անասնաբուծությունը անեկամտաբեր է: Աղքատության տոկոսը կազմում է ընդհանուր բնակչության մոտ 43%-ը: Բարձր է գործազրկությունը, որոշակի գումար համայնքի ընտանիքների բյուջեն համալրում են արտագնա աշխատանքներից: Ցածր է զբաղվածության տոկոսը: Վարձատրվող աշխատանքով ապահովված են մոտ 132 մարդ, հիմնականում կրթության, տեղական ինքնակառավարման մարմիններում, ենթակա կազմակերպություններում, սպասարկման ոլորտում:

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 66575.7 հազ. դրամ, որից սեփական եկամուտները՝ 8686.1 հազ. դրամ, որը կազմում է բյուջեի ընդհանուր եկամուտների 13.1 %-ը:

- Շահումյան համայնքում սեզոնային գործում է „Արթ-Վայն,, պահածոների գործարանը, որտեղ պահածոյացվում են տարբեր հատապտուղներ, մրգեր, բանջարեղեններ, իսկ ամռանը տեղում մթերվում է մոտակա անտառներից հավաքված հատապտուղները և ուտելի բույսերը: Համայնքում գործում է նաև կաթի վերամշակման արտադնարան:

- Գյուղատնտեսակա արտադրանքը՝ կաթի մի մասը մթերվում է տեղում, իսկ մեծ մասը մթերվում է Վանաձորի կաթի գործարանում, պանիրը և այլ կաթնամթերքները վաճառվում է Վանաձորի շուկայում: Կոպերատիվի ստեղծման դեպքում հնարավոր կլինի կաթը տեղում մթերել և վերամշակել:

- Համայնքի ղեկավար Էդիկ Մանուկյանի նախաձեռնությամբ 2010թ-ին համայնքում սկսվել է եկեղեցու կառուցման աշխատանքները, որն ավարտին է հասցրվել 2013թ-ին: Եկեղեցին կառուցվել է հանգանակությամբ, այն օծվել է Սբ. Հակոբ Մզբնա Հայրապետի անվամբ և 2016թ-ին հանձնվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տնօրինությանը: Ամեն տարի դեկտեմբերի 17-ին Սուրբ պատարագով և մատաղի արարողությամբ նշվում է Սբ. Հակոբ Մզբնեցու տոնը: Եկեղեցու առկայությունը նպաստում է զբոսաշրջիկների և Առաքելական եկեղեցու հետևորդների հոսքին դեպի համայնք:

Համայնքում դեռևս 1945թ-ից տեղակայված է Ստեփան Շահումյանի արձանը, ում անվամբ էլ կոչվել է համայնքը:

Համայնքի Մայմեխ լեռան գագաթին տեղադրված է „Մայրասար,, հուշակոթող: Որպես սրբավայր յուրաքանչյուր տարի Վանաձորի Սբ. Աստվածածին եկեղեցու մոտից ուղտավորները երթ են կազմակերպում:

Համայնքի ազատամարտիկների պուրակում տեղադրված է Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշաղբյուր, „Արցախյան պատերազմում զոհված,, հերոսների հիշատակին նվիրված խաչքար, իսկ 2015 թ-ին Եղեռնի 100-ամյակի

կապակցությամբ եկեղեցու բակում տեղադրվել է Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին նվիրված խաչքար:

Համայնքի մուտքի մոտ՝ բուժ. ամբուլատորիայի բակում տեղադրված է ՀՀ խորհրդանիշների հուշահամալիրը:

Համայնքի Թեժ-լեռ կոչվող տարածքում տեղադրված է Հայկական Բարեգործական միության սկաուտների ճամբարը, որտեղ շուրջ 10 երկրներից 150-ից ավելի սկաուտներ անց են կացնում իրենց ամառային հանգիստը: Ճամբարի տարածքում համայնքի կողմից տեղադրվել է Թեհրան Երևան ավիովթարից զոհված սկաուտների հիշատակին նվիրված խաչքար:

- Ընդհանուր միջնակարգ կրթությունն իրականացվում է Շահումյանի միջնակարգ դպրոցում: Դպրոցը կառուցվել է 1977թ-ին, 1997թ-ին կապիտալ վերանորոգվել է, իսկ 2016թ-ին կառավարության միջոցներով ավարտվել է դպրոցի տանիքի միջ մասի կապիտալ նորոգման աշխատանքները: Դպրոցը համալրված է մասնագետ կադրերով, 1 ուսուցչին ընկնում է մոտ 8 աշակերտ, աշակերտների թիվը կազմում է 254, իսկ աշխատողներինը՝ 45, որից ուսուցիչ՝ 33: Դպրոցը ապահովված է հիմնական գույքով, սակայն համակարգիչների անբավարար քանակի պատճառով ինֆորմատիկայի դասերը ընթանում են ոչ լիարժեք: Դպրոցը գազաֆիկացված է, ջեռուցումը կատարվում է վառարաններով, ունի մշտական խմելու ջուր, ունի լոկալ կոյուղի:

Դպրոցի սպորտդահլիճում է գործում ազատ ոճի ըմբշամարտի խմբակ, որտեղ մարզվում են թվով 26 սան: Դպրոցին անվարձահատույց հատկացված է 10000 մ.ք. տարածք, որտեղ նպատակահարմար կլինի կառուցել ֆուտբոլի դաշտ:

Սովորողների թվաքանակը ստաբիլ է: Սակայն քանի որ համայնքը քաղաքին կից է, նկատվում է դպրոցականների արտահոսք Վանաձոր քաղաքի տարբեր դպրոցներ:

Դպրոցին կից գործում է նախակրթարան, որտեղ հաճախում են թվով 35 երեխա: Շրջանավարտները ուսումը շարունակում են հիմնականում Վանաձորի, ինչպես նաև հանրապետության այլ բուհերում ու կրթօջախներում:

- Համայնքում գործում է “Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն” ՓԲԸ-ն: Հիմնական մասնաշենք չունենալու պատճառով առողջապահական կենտրոնին անհատույց հատկացվել է գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած մանկապարտեզի մասնաշենքը, որի արդյունքում համայնքը չունի մանկապարտեզ: Մասնաշենքը 2012թ-ին կապիտալ նորոգվել է ՀՄՆՀ-ի կողմից: Ստացիոնար բուժման կառույց չկա: “Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն” ՓԲԸ-ն գործում է հինգօրյա աշխատաժամանակով: Անձնակազմը հետևյալն է՝ 1 բժիշկ, 3 բուժքույր, 1 հաշվապահ, 1 լաբորանտ, 1 սանիտար: Մասնագետները անցել են ընտանեկան բժշկի վերապատրաստման փուլերը: Բուժ օգնությունը անվճար է:

- Սոցիալական նպաստների համակարգում ընդգրկված են 134 ընտանիքներ, որից նպաստառու են 90 ընտանիք, հրատապ օգնություն և սոցիալական նպաստ են ստանում 35 ընտանիք, մինչդեռ համակարգի անկատարության պատճառով շատերը զրկված են օգնությունից: “Փարոս” համակարգում ընդգրկվելու պատճառով մարդիկ հրաժարվում են հողամասերից և անասնապահությունից, որի արդյունքում ցածր է գյուղատնտեսության մակարդակը:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

- Համայնքի ամենախոցելի կողմերից մեկը ճանապարհային տնտեսությունն է: Չնայած այն հանգամանքի, որ պարբերաբար իրականացվում են ներհամայնքային ճանապարհների հարթեցման և փոսալցման աշխատանքներ, այնուամենայնիվ ճանապարհների վիճակն անմխիթար է: Համայնքի բյուջեով հնարավոր չէ իրականացնել գոնե կենտրոնական ճանապարհների կապիտալ նորոգում: Դիմել ենք Լոռու մարզպետարան „Համայնքի կենտրոնական ճանապարհի մոտ 2 կմ հատվածի ասֆալտապատման,, ծրագիր իրականացնելու խնդրանքով: Իր հերթին համայնքը պատրաստակամ է կատարել համապատասխան ներդրում:

- ԱՄՆ ՄԶԳ-ի և ՇԵՆ ԲՀԿ-ի համագործակցության արդյունքում կապիտալ նորոգվել է բազմաբնակարան շենքի առաջին հարկի մի հատվածը մոտ 170 քմ մակերեսով, որը գտնվում է համայնքի կենտրոնական մասում, մոտ 20 մ. հեռավորության վրա գտնվում է պուրակը՝ խաղասարքերով և շատ հարմար է որպես մանկապարտեզ գործելու: Կրկին դիմել ենք ՇԵՆ ԲՀԿ-ին՝ մանկապարտեզի համար գույքի և խոհանոցային պարագաների ձեռքներման խնդրանքով: Համայնքը իր բյուջեի միջոցներից կապահովի աշխատակազմի աշխատավարձի, երեխաների սննդի և կոմունալ վճարումների ծախսերը: Ծրագրի իրականացման դեպքում համայնքը կունենա նախադպրոցական ուսումնական հաստատություն, որտեղ կրթություն և դաստիարակություն կստանան 3-4 տարեկան շուրջ 30 երեխաները:

- Գյուղ. նախարարության և Համաշխարհային բանկի կողմից ընթացքի մեջ է գտնվում „Գյուղատնտեսության զարգացման և կոպերատիվի ստեղծման,, ծրագիրը:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հ/Հ	Եկամտի տեսակը	2016թ. փաստ.	2017թ. փաստ.	2018թ. կանխա.	2019թ. կանխա.	2020թ. կանխա.	2021թ. կանխա.
	Եկամուտներ՝ Ընդամենը	66575.7	68135.0	70000.0	72000.0	74000.0	76000.0
1	Հարկային եկամուտներ՝ ընդամենը	7065.3	10742.4	10742.4	10742.4	10742.4	10742.4
1.1	Հողի հարկ	2706.9	5036.7	5036.7	5036.7	5036.7	5036.7
1.2	Գույքահարկ	4173.4	5550.7	5550.7	5550.7	5550.7	5550.7
1.3	Տեղական տուրքեր	185.0	155.0	155.0	155.0	155.0	155.0
2	Ոչ հարկային եկամուտներ	4620.8	1920.9	1920.9	1920.9	1920.9	1920.9
2.1	Հողի Վարձավճար	1310.8	1310.9	1310.9	1310.9	1310.9	1310.9
2.2	Այլ ոչ հարկային եկամուտներ	3310.0	610.0	610.0	610.0	610.0	610.0
3	Դոտացիա ֆինանսական համահարթեցում	54889.6	55471.7	57336.7	59336.7	61336.7	63336.7

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հ/Հ	Եկամտի տեսակը	2016թ. փաստ.	2017թ. փաստ.	2018թ. կանխա.	2019թ. կանխա.	2020թ. կանխա.	2021թ. կանխա.
	ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	69497.0	68135.0	70000.0	72000.0	74000.0	76000.0
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	37358.0	35065.0	35065.0	35065.0	35065.0	35065.0
2	Տնտեսական հարաբերություններ	8830.0	3000.0	3000.0	3000.0	3000.0	3000.0
3	Շրջակա միջավայրի պաշտպանություն	1825.0	1700.0	1700.0	1700.0	1700.0	1700.0
4	Բնակարանային շինարարութ. և կոմունալ ծառայություն	1594.0	1700.0	1700.0	1700.0	1700.0	1700.0
5	Մշակույթ, սպորտ, կրոն	14020.0	18720.0	18720.0	18720.0	18720.0	18720.0
6	Կրթություն	1100.0	1100.0	1100.0	1100.0	1100.0	1100.0
7	Սոցիալական պաշտպանվածություն	4770.0	3600.0	3600.0	3600.0	3600.0	3600.0
8	Պահուստային ֆոնդ	-	3250.0	5115.0	7115.0	9115.0	11115.0

Առաջիկա 5 տարիների ընթացքում կանխատեսվող եկամուտներից և ծախսերից բացի տարվում են աշխատանքներ հավելյալ եկամուտներ հայթայթելու և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնելու համար: Եկամուտներ կարելի է ստանալ միջազգային կամ դոնոր կազմակերպություններ ներգրավելու միջոցով:

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

- Բնակչության անապահովության, հողերի օգտագործման անարդյունավետության, ինչպես նաև համայնքից երկարատև բացակայության պատճառով չեն կատարվում հարկային պարտականությունները՝ հիմնականում հողի հարկը, ցածր հավաքագրման արդյունքում հնարավոր չէ իրականացնել բոլոր պլանավորումները: ԽՍՀՄ փլուզումից հետո թվով 424 փախստկաններ գաղթել են Շահումյան համայնք, օգտվել են սեփականաշնորհումից և մեկնել արտերկիր: Նրանց կողմից սեփականաշնորհված հողակտորները բացակայության պատճառով չեն մշակվում և չեն կատարվում նրանց հարկային պարտավորությունները: Ամառանոցային թաղամասի շուրջ 180 սեփականաշնորհված միավորներից փաստացի բնակվում են 14 ընտանիք: Մնացածը հաշվառված չեն, նրանց գտնվելու վայրը հատնի չէ և չեն կատարում հարկային պարտավորությունները:

- Համայնքում մեծ են սողանքները հատկապես հին գերեզմանատան տարածքում, գետի հունի խարխլման պատճառով որոշ տներ վտանգի տակ են: 2016թ-ի հունիսին տեղացած հորդառատ անձրևների պատճառով գետը դուրս էր եկել հունից և հեղեղել բոլոր ճանապարհները, իսկ հեղեղներից հետո առաջացած սողանքի պատճառով 2 բնակելի տուն փլուզվել են, 6 տուն գտնվում են վտանգի գոտում: Հեղեղները կրում են պարբերական բնույթ, որ պատճառով համայնքը զգալի վնաս է կրում: Համայնքում առկա են նաև քարաթափումներ:

- Արտագնա աշխատանքը և բնակչության արտահոսքը: Աշխատատեղերի բացակայության, սոցիալական ծանր և կոմունալ ոչ հարմարավետ պայմանների պատճառներով տեղի է ունենում բնակչության արտահոսք:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւՑՀՍ) վերլուծություն

- *Համայնքի ուժեղ կողմեր*

Գյուղը կապված է մարզկենտրոն Վանաձոր քաղաքին, 13 համարի երթուղային տաքսին աշխատում է կանոնավոր 20 րոպեն 1 անգամ, մշտական կապ ունի մարզային և հանրապետության մյուս քաղաքների հետ:

Համայնքը մեծմասամբ գազաֆիկացված է:

Լուծված է Կենտրոնական ճանապարհների լուսավորության հարցը, իսկ մնացած փողոցների լուսավորության հարցը ընթացքի մեջ է:

Համայնքն ունի զարգացած „կրթամարզամշակութային համալիր,, ուր գործում են պարի, սպորտի, դիմի, կիթառի, ձեռագործի և գեղարվեստի խմբակներ, որոնց հաճախում են մոտ 80 երեխա: Մեկ տարվա ընթացքում պարից ունենք 4 դասընթաց, սպորտից զբաղեցրել են 6 մրցանակային տեղեր:

Համայնքում հեռախոսակապը նորմալ է և որակով:

Գործող առևտրական օբյեկտները հիմնականում բավարարում են բնակչության պարենային պահանջները:

Բարեխառն եղանակը և առկա արտավայրերը հիմք են անասնաբուծության զարգացման:

- *Համայնքի թույլ կողմեր*

Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների, փողոցների անմխիթար վիճակը, զբաղվածության ցածր մակարդակը, աշխատատեղերի պակասը,

բնակչության 33 %-ը սոցիալապես անապահով են, 10 %-ը՝ ծայրահեղ աղքատներ,

համայնքում բարձր է արտերկիր արտագաղթը,

համայնքում առկա են անօթևան փախստականներ,

գյուղատնտեսական տեխնիկայի բացակայությունը, որը ազդում է գյուղատնտեսության զարգացման վրա:

Աղբահանությունը կատարվում է մասնակիորեն, միայն 2 բազմաբնակարան շենքերում, համայնքի ուժերով:

- *Հնարավորություններ*

Գույքի ձեռքբերման դեպքում հնարավոր է իրականացնել մանկապարտեզի գործունեություն:
„Կրթամարզամշակութային համալիրում, հնարավոր է ավելացնել խմբակների թիվը:

Կենտրոնացված աղբահանության իրականացում:

- *Սպառնալիքներ*

Համայնքը շրջապատված է սարերով, գարնանը ձնհալների, իսկ աշնանը հորդառատ անձրևների պատճառով հնարավոր է սելավների և սողանքների ակտիվացում: Բնական աղետների գնահատման արդյունքում համայնքը մարզում ընդգրկվել է ամենախոցելի 6 համայնքների շարքում:

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

1. Շահումյան համայնքի տարածքով անցնող Տանձուտ գետի հատվածը բերվածքներից մաքրելու, ինչպես նաև ափերը քարե և գաբիոնե շարվածքով ամրացնելու շխատանքներ:
2. Ներհամայնքային կենտրոնական ճանապարհների ասֆալտապատում, ծայրամասային փողոցների ընթացիկ վերանորոգում, փոսալցման և հարթեցման աշխատանքների իրականացում:
3. Մանկապարտեզի բացում, շենքի վերադասավորում, գույքի և խոհանոցային պարագաների ձեռքբերում:
4. Ընթացքի մեջ գտնվող գյուղատնտեսական ծրագրի ավարտական փուլի իրականացում, գյուղ. տեխնիկայի ձեռքբերում և դաշտամիջյան ճանապարհների հարթեցում:
5. Հին գերեզմանատան փլուզման վերանորոգում, վնասված ցանկապատի վերականգնում:
6. Փողոցային լուսավորության գործընթացի ավարտում, համայնքի երկրորդական ճանապարհների լուսավորություն:
7. Տրակտորի ձեռքբերում:
8. Կոմունալ ծառայությունների բարելավում, աղբահանության բարելավում:
9. Համայնքապետարանի, համայնքային կենտրոնի և „Կրթամարզամշակութային համալիրի,, շենքերում տեսախցիկների և տեսահսկման համակարգերի տեղադրում:
10. 13-րդ երթուղային տաքսու երթուղու երկարացում 1 կանգառի չափով, 2-րդ փողոցի երկայնքով, մինչև 6-րդ փողոցի սկիզբը, թվով 1 կանգառի կառուցում:
11. Գործազրկության կրճատում, աշխատատեղերի ստեղծում համայնքային սեփականություն հանդիսացող ազատ տարածքի վերանորոգման և որպես գործարան կամ արտադրամաս օգտագործելու հաշվին:
12. Սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագրի իրականացում, համայնքի սեյսմիկ քարտեզի ստեղծում:
13. „Կրթամարզամշակութային համալիրում,, միջնորմներ և դռներ տեղադրելու միջոցով հարկերի առանձնացում միջանցքներից, դրա միջոցով ջեռուցման խնդրի բարելավում:
14. Նոր գերեզմանատան ճանապարհի բարեկարգման աշխատանքներ:
15. Տուրիզմի զարգացման նպատակով ամառային հանգստի գոտու ստեղծում:
16. 12 և 13-րդ փողոցների հատման մասում, ինչպես նաև Քարհանք թաղամասում պուրակների կառուցում:

Համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են.

Գյուղատնտեսություն, ճանապարհաշինություն, կոմունալ ենթակառուցվածքների վերականգնում, կենտրոնացված աղբահանման համակարգ: Վերը նշված խնդիրների իրականացման դեպքում կունենաք բարեկարգ, զարգացած համայնք, աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը կկրճատվեն, աշխատատեղերի ավելացման և գյուղատնտեսությամբ զբաղվելու եկամտաբերության արդյունքում կկրճատվեն արտագնա աշխատանքով զբաղվողների թիվը:

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1. Շահումյան համայնքի տարածքով անցնող Տանձուտ գետի հատվածը բերվածքներից մաքրելու, ինչպես նաև ափերը քարե և գաբիոնե շարվածքով ամրացնելու շխատանքներն իրականացնելու նպատակը բնական աղետներից առաջացող ռիսկերի նվազեցումն է:
2. Ներհամայնքային կենտրոնական ճանապարհների ասֆալտապատում, ծայրամասային փողոցների ընթացիկ վերանորոգում, փոսալցման և հարթեցման աշխատանքների իրականացում: Նպատակը բարեկարգ համայնք ունենալն է, երթևեկության անվտանգությունը և տեղաշարժման հեշտ լինելը:
3. Մանկապարտեզի բացում, շենքի վերադասավորում, գույքի և խոհանոցային պարագաների ձեռքբերում: Նպատակը մանկահասակ երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացում:
4. Ընթացքի մեջ գտնվող գյուղատնտեսական ծրագրի ավարտական փուլի իրականացում, գյուղ. տեխնիկայի ձեռքբերում և դաշտամիջյան ճանապարհների հարթեցում: Նպատակը գյուղատնտեսության զարգացում:
5. Հին գերեզմանատան փլուզման վերանորոգում, վնասված ցանկապատի վերականգնում: Նպատակը՝ գերեզմանատների պահպանություն
6. Փողոցային լուսավորության գործընթացի ավարտում, համայնքի երկրորդական ճանապարհների լուսավորություն: Նպատակը՝ լուսավոր և անվտանգ փողոցներ ունենալն է:
7. Տրակտորի ձեռքբերում՝ նպատակը բարեկարգ, անցանելի, ձմռանը ապահով ճանապարհներ ունենալն է:
8. Կոմունալ ծառայությունների բարելավում, աղբահանության բարելավում՝ նպատակը համակարգված աղբահանություն կատարելն է, մաքուր համայնք ունենալը:
9. Համայնքապետարանի, համայնքային կենտրոնի և „Կրթամարզամշակութային համալիրի,, շենքերում տեսախցիկների և տեսահսկման համակարգի տեղադրում՝ նպատակը անվտանգության ապահովումն է:
10. 13-րդ երթուղային տաքսու երթուղու երկարացում 1 կանգառի չափով, 2-րդ փողոցի երկայնքով, մինչև 6-րդ փողոցի սկիզբը, թվով 1 կանգառի կառուցում, նպատակը կոմունալ հարմարությունների ստեղծում բնակիչների համար:
11. Գործազրկության կրճատում, աշխատատեղերի ստեղծում համայնքային սեփականություն հանդիսացող ազատ տարածքի վերանորոգման և որպես գործարան կամ արտադրամաս օգտագործելու հաշվին:

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

Պարտադիր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է /ըստ անձնագրերի/

1. Շահումյան համայնքի տարածքով անցնող Տանձուտ գետի հատվածը բերվածքներից մաքրելու, ինչպես նաև ափերը քարե և գաբիոնե շարվածքով ամրացնելու շխատանքներ– ՀՀ կառավարության աջակցությամբ և համայնքի բյուջեից ներդրման միջոցով
2. Ներհամայնքային կենտրոնական ճանապարհների ասֆալտապատում, ծայրամասային փողոցների ընթացիկ վերանորոգում, փոսալցման և հարթեցման աշխատանքների իրականացում –նախատեսվում է իրականացնել հրատապ ծրագրերի շրջանակում և համայնքի ներդրումներով: Հակառակ դեպքում հնարավոր է այլ դոնոր կազմակերպությունների ընդգրկում:
3. Մանկապարտեզի բացում, շենքի վերադասավորում, գույքի և խոհանոցային պարագաների ձեռքբերում – նախատեսվում է գույքը ձեռք բերել ՇԵՆ ԲՀԿ-ի և համայնքի ներդրման միջոցով, իսկ մանկապարտեզի պահպանման ծախսերը կկատարվի համայնքի բյուջեից:
4. Ընթացքի մեջ գտնվող գյուղատնտեսական ծրագրի ավարտական փուլի իրականացում, գյուղ. տեխնիկայի ձեռքբերում և դաշտամիջյան ճանապարհների հարթեցում –իրականացվում է համաշխարհային բանկի ներդրմամբ, համայնքի կողմից տեխնիկայի ձեռքբերման համար կտրամադրվի 5% ներդրում, իսկ ճանապարհների վերանորոգման համար 20% ներդրում:
5. Հին գերեզմանատան փլուզման վերանորոգում, վնասված ցանկապատի վերականգնում- կիրականացվի համայնքի բյուջեով:
6. Փողոցային լուսավորության գործընթացի ավարտում, համայնքի երկրորդական ճանապարհների լուսավորություն- կիրականացվի Դոնոր կազմակերպության և համայնքի կողմից ներդրման հաշվին:
7. Տրակտորի ձեռքբերում - կիրականացվի համայնքի բյուջեի միջոցներով
8. Կոմունալ ծառայությունների բարելավում, աղբահանության բարելավում -ընդգրկված է մարզային ծրագրում, համայնքը կկատարի ներդրում
9. Համայնքապետարանի, համայնքային կենտրոնի և „Կրթամարզամշակութային համալիրի,, շենքերում տեսախցիկների և տեսահսկման համակարգի տեղադրում - իրականացվում է է համայնքի բյուջեի միջոցներով
10. 13-րդ երթուղային տաքսու երթուղու երկարացում 1 կանգառի չափով, 2-րդ փողոցի երկայնքով, մինչև 6-րդ փողոցի սկիզբը, թվով 1 կանգառի կառուցում - կիրականացվի

5. ՀՀԶԾ-ի մոնիթորինգը

Իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա, որով գնահատվում է զարգացման ծրագրերի անձնագրերով նախատեսված ցուցանիշների իրական լինելը, ծրագրի իրականացման արդյունավետությունը, բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունը: Հսկվում է ծրագրի իրականացման ընթացքը: Յուրաքանչյուր ծրագրի նակատմամբ իրականացված մոնիտորինգի ցուցանիշը նշված է մոնիթորինգի վերաբերյալ հավելվածում՝ ըստ տարիների և թիրախային արժեքների: